ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Գրասենյակային գույքի գնման մասին
ՀՄԴ ՇՀԱՊՁԲ 11/9-15

Գ. Հաղարծին 2015թ.

ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ դպրոց, ի դեմս դպրոցի տնօրեն Գ. Թամամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և , ... -ն, ի դեմս ընկերության ..... (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է ոչ պատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով ոչ պատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է ոչ պատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պայմանագրի գնի 100 տոկոսը՝ ---------- (----------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ , պայմանագիրն /կամ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 բանկային օրվա ընթացքում, : Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա:

(Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրով սահմանված կնքվելիք վճարման ժամանակացույցով նախատեսված :

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված Արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը Արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.1.1 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքները կմատակարարվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի, տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ <Գնումների մասին> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չեն կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ դպրոց Գ. Հաղարծին, 1 փ շենք 18 ՀՎՀՀ 07900743 Հ/Հ 16015011280500 ՎՏԲ Հայաստան Դիլիջան մ/Ճ Հաղարծինի դպրոցի տնօրեն _____Գ. Թամամյան (ստորագրություն) Կ.Տ.	Հասցե՝ _____ ՀՎՀՀ՝ _____ Հ/Հ՝ _____ Տնօրեն՝ _____ (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
,__ _____ 2015թ. կնքված
ՀՄԴ-ՇՀԱՊՁԲ-11/9-14 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ապրանքի տեխնիկական բնութագիրը	չ/մ	քանակը	մատակարարման վայրը
1	աթոռ՝ կիսափափուկ	Աշխատանքային աթոռ՝ հաճարի փայտից, կիսափափուկ: Կարկասը՝ հաճարի փայտից, լաքապատ: Ոտքերի հաստությունը՝ 4 x 3 սմ, ոտքերն իրար կապող գոտիներինը՝ 3 x 2 սմ: Նստատեղը՝ 10 մմ ֆաներա, 3-4 սմ սպունգ և սինթետիկ ամուր կտոր: Կտորը՝ամուր, հաստ, գույնը՝ ըստ պահանջի: Չափսերը՝ 39-42 x 41-44 x 96-98 (43-45)	հատ	20	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
2	1. բազկաթոռներ, բազմոցներ	Կարկասը՝ փայտից: Պաստառն ամուր կտորից, սպունգը բարձրորակ, 15-25սմ : Բազմոցի նստատեղի երկարությունը 170սմ, լայնությունը՝ 60սմ: Թիկնակի բարձրությունը նստատեղից 70 սմ: Նստոցի բարձրությունը հատակից 45սմ, բազմոցի ընդհանուր բարձրությունը հատակից 120սմ,կողմնային կողերով: Բազկաթոռների նստատեղի երկարությունը 50-60սմ, լայնությունը՝ 60սմ: Թիկնակի բարձրությունը նստատեղից 70 սմ: Նստոցի բարձրությունը հատակից 45սմ, բազմոցի ընդհանուր բարձրությունը հատակից 120սմ,կողմնային կողերով: Գույնը և դիզայանը ըստ պատվիրատուի: Կոմպլեկտում՝ 2 բազմոց, 4 բազկաթոռ:	կոմպլեկտ	1	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
3	խոհանոցային սեղաններ	Սեղանի Կարկասը՝ լամինատից, երեսը լամինապատ, 70սմ x 70սմ: Աթոռները՝ նստատեղերն ու թիկնակը լամինապատ, նստատեղը 30սմ X 35սմ, թիկնակի լայնությունը 20սմ:	կոմպլ	12	
4	սեղան՝ դիմադիր	Երեսը լամինացված ԴՄՊ՝ հաճարի գույնի: Սեղանի երեսին բոլոր կողմերից ամրացվում է 1044 դեկոր (պրոֆիլ): Անհրաժեշտ պարագաները՝ 5 մմ հաստությամբ պլաստմասսայե տակդիրներ (ոտքերի տակ), պտուտակ, ինքնասոսնձվող խցափակումներ, կպչուն ժապավեն (օգտագործել բոլոր երևացող մասերում): Սեղանի կողային նիստերն իրար հետ պետք է կապակցվեն երկու լրացուցիչ լամինատե գոտիներով՝ 5-7 սմ լայնությամբ, որոնց վրա կամրացվի սեղանի երեսը: Չափսերը՝ 180 x 80 x 73սմ	հատ	2	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
5	սեղան՝ աշակերտական,	Սեղանի երեսը, դիմային և կողային մասերը, դարակը , թիկնակով 2 աթոռները պատրաստվում են 18 մմ	կոմպլեկտ	45	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18

	միաձույլ մետաղյա կարկասով	հաստությամբ հաճարի գույնի լամինացված ԴՍՊ-ից, որը կարկասին է ամրացվում հեղուս-մանեկով: Ընդ որում, սեղանի երեսի և աթոռների նստատեղի ու թիկնակի ԴՍՊ-ների եզրերը միակողմանի կլորացվում են պեվեխայով: Անհրաժեշտ պարագաները՝ հեղուս-մանեկ, կպչուն ժապավեն (օգտագործել լամինատի բոլոր երևացող մասերում): Չափսերը՝ 120 x 60 x 75			
6	գրապահարաններ	Չափսերը 185 X 0.80 X 40 սմ: Պատրաստված լինի լամինացված դեսպեից:: Գույնը ըստ պատվիրատուի պահանջի:	հատ	18	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
7	գրասենյակային կահույք	Լամինատե պահարան, երկարությունը 5 մ, լայնությունը 40 սմ, բարձրությունը `2 մ, դարակներից 4-ը ապակե 2 ական դռներով, բռնակներով, փայտյա շրջանակներով: Ապակու վրա ամրացված լինի փայտյա 2 սմ լայնությամբ ծողեր: կողքից լինի զգեստապահարան 2 փայտյա դռներով, երկարությունը 120 սմ: Կոմպլեկտի մեջ ներառվում է նաև 4 գրասեղան՝ Սեղանի չափսերը՝ 120 x 60 x 75 սմ, Պատրաստված փայլուն ՄԴՖ-ից: Եզրերը լինեն հաստեցված 1010 պրոֆիլով:Սեղանի 1 կողմում լինի 3 սահուն դարակ փականով և բռնակով, մյուս կողմում 3 դարակ ` 1փակվովի դռնով: Գույնը ըստ պատվիրատուի պահանջի:	կոմպլ	1	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
8	գրատախտակ կավիճով գրելու համար	Պատրաստվում է սև գույնի լամինացված ԴՎՊ-ից: Շրջանակը՝ հաճարի գույնի 1052 դեկոր (պրոֆիլ), որն ամրացվում է դեկորի սոսնձի և թիթեռնիկների կիրառմամբ: Գրատախտակը պրոֆիլով եզրապատվում է 3 կողմից (կողքերից և վերևից), իսկ ներքի մասը եզրապատվում է հաճարի փայտով (8 x 4), որը ծառայում է նաև որպես կավճի տակդիր: Փայտյա շրջանակը 2 տեղից փորվում է (ուղղանկյուն և օվալաձև), որից ուղղանկյուն փորվածքի մեջ է մտնում և ամրացվում գրատախտակը, իսկ օվալաձև փորվածքը ծառայում է որպես կավճի տեղ: Գրատախտակի եզրային շրջանակների վերին հատվածի հետնամասում (պրոֆիլի լայն մասում) ամրացվում է (պրոֆիլի մեջ փորվածքով տեղադրվում է) մետաղյա կախիչ՝ գրատախտակը պատին ամրացնելու համար: Չափսերը՝ 180 x 90	հատ	15	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
9	սեղան, գրասեղան, աշխատանքային, գրասենյակային	Սեղանի չ ափսերը՝ 120 x 60 x 75 սմ, Պատրաստված լինի փայլուն ՄԴՖ-ից: Եզրերը լինեն հաստեցված 1010 պրոֆիլով: Սեղանի 1 կողմում լինի 3 սահուն դարակ փականով և բռնակով, մնուս կողմում 3 դարակ ` 1փակվովի դռնով: Գույնը Ըստ պատվիրատուի պահանջի:	հատ	16	Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1 փ շենք 18

*Ապրանքների ձեռքբերման գնման գործընթացը կազմակերպվում է համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա:

** Ապրանքը պետք է լինի չօգտագործված, գործարանային արտադրության, տեղադրումը, ամրացումը մատակարարի կողմից՝ համապատասխան պատվիրատուի տրված չափերի հիման վրա:

***Հաղթող մասնակցին կտրամադրվի ապրանքների էսքիզները:

ԳՆՈՐԴ

ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ դպրոց
Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
ՀՎՀՀ 07900743
Հ/Հ 16015011280500
ՎՏԲ Հայաստան Դիլիջան մ/Ճ
Հաղարծինի դպրոցի տնօրեն

Գ. Թամամյան (ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Հասցե՝ _____
ՀՎՀՀ՝ _____
Հ/Հ՝ _____

Տնօրեն՝ _____

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
,____թ_____ 2015թ. կնքված
ՀՀՄԴ -ՇՀԱՊՁԲ-11/9-15- գնման պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

,____ե _____ 20____թ.
Պայմանագրի անվանումը՝ ,_____ե:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե _____ 20____թ
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդը, ի դեմս _____ և Վաճառողը՝ ի դեմս _____ _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ,____ե _____ 20____թ.-ից ,____ե _____ 20____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Հավելված N1
,ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9 ծածկագրով
ընթացակարգի հրավերի
, ՀՄԴ -ՇՀԱՊՁԲ-11/9-14- ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ դպրոցի կողից N , ՀՄԴ -ՇՀԱՊՁԲ-11/9-15 ծածկագրով

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

,_____ _____ 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված N2
,ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9 ծածկագրով
ընթացակարգի հրավերի
, ՀՄԴ -ՇՀԱՊՁԲ-11/9-15- ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի պ ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ,ՀՄԴ -ՇՀԱՊՁԲ-11/9-14- ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժիններ համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1				

*3-րդ սյունակում նշված ,Արժեքրե ներառում է ինքնարժեքը և շահույթը:
** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Ցուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

_____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

_____
(ստորագրությունը) Կ. Տ.

,_____ե _____ 2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

[redacted]

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ՀԱՂԱՐԾԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տավուշի մարզ,3908 գ. Հաղարծին

☎(026895) 5-50

N

3908 Գ. Հաղարծին, 1փ. շենք18
հեռ./0268/95-550
20.02..2015

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/9» ծածկագրով գնման ընթացակարգով շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումներ աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն կից ներկայացվող գնման հայտում նշված ապրանքները(Գնման հայտը կցվում է:)
Հայտնում ենք որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1-ին փ. շենք 18 Ա. Թամրազյանին մինչև մարտի 3-ը ժամը 11:00-ը
Հայտերը կբացվեն ՀՀ Տավուշի մարզ. գ. Հաղարծին. 1փ շենք 18 հասցեում , 2015թ մարտի 3 -ին, ժամը 11:00-ին:
Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հաղարծինի դպրոցի տնօրեն Գ. Թամամյան

Հավելված N 2
<< >> 2015թ. կնքված
ՀՄԴ -ՇՀԱՊՁԲ -11/9-15 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազար դրամ

h/h	Անվանումը	Չափի միավորը	Միավորի նախահաշվային գին	Նախատեսվում է գնել 2015թ.								Ընդամենը	
				I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ մինչև դեկտեմբերի 20-ը			
				քանակ	գինը	քանակ	գինը	քանակ	գինը	քանակ	գինը	քանակ	գինը
1	աթոռ՝ կիսափափուկ	հատ				20		10				20	
2	բազկաթոռներ, բազմոցներ	կոմպլ				1						1	
3	խոհանոցային սեղաններ	կոմպլ				12						12	
4	սեղան՝ դիմադիր	հատ				2						2	
5	սեղան աշակերտական,	կոմպլ				45						45	
6	գրապահարաններ	հատ				18						18	
7	գրասենյակային կահույք	կոմպլ				1						1	
8	գրասեղան կավիճով գրելու համար	հատ				15						15	
9	սեղան, գրասեղան, աշխատանքային, գրասենյակային	հատ				16						16	
									0.0		0.0		0.0

ԳՆՈՐԴ

Կ.Տ.

ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ դպրոց
Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
ՀՎՀՀ 07900743
Հ/Հ 16015011280500
ՎՏԲ Հայաստան Դիլիջան Մ/Ճ
Հաղարծինի դպրոցի տնօրեն

Գ. Թամամյան

ՎԱՃԱՌՈՂ

_____
Հասցե՝ _____
ՀՎՀՀ՝ _____
Հ/Հ՝ _____

Տնօրեն՝ _____
(ստորագրություն

(ստորագրություն)

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ՀԱՂԱՐԾԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տավուշի մարզ,3908 գ. Հաղարծին

☎(026895) 5-50

N

3908 Գ. Հաղարծին, 1փ. շենք18
հեռ./0268/95-550
20.02.2015

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9>> ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

,ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/9 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ դպրոցի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ,Գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՀՄԴ-ՇՀԱՊՁԲ-11/9-15>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Տավուշի մարզ, Գ. Հաղարծին, 1-ին փ. շենք 18 Ա. Թամրազյանին մինչև մարտի 3-ի ժամը 11:00-ը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ Հաղարծինի միջնակարգ դպրոցի գնումների համակարգող Ա. Թամրազյանը (հեռ. 094999040):

Հայտերը կբացվեն ՀՀ Տավուշի մարզ. գ. Հաղարծին. 1փ շենք 18 հասցեում , 2015 մարտի 3-ին, ժամը 11:00-ին:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ՀԱՂԱՐԾԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տավուշի մարզ,3908 գ. Հաղարծին

☎(026895) 5-50

Գնման առարկա է հանդիսանում Հաղարծինի միջնակարգ դպրոցի կարիքների համար գնվող գրասենյակային գույքը (9 Չափաբաժին):

Տեխնիկական բնութագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՇՀԱՊՁԲ-11/9 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հաղարծինի միջն. դպրոցի տնօրեն Գ. Թամամյան

Հավելված N 2
<< >> 2015թ. կնքված
ՀՄԴ -ԵՀԱՊՁԲ -11/9-15 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազար դրամ

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Միավորի նախահաշվային գին	Նախատեսվում է գնել 2015թ.								Ընդամենը	
				I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ մինչև դեկտեմբերի 20-ը			
				քանակ	գինը	քանակ	գինը	քանակ	գինը	քանակ	գինը	քանակ	գինը
1	աթոռ՝ կիսափափուկ	հատ				20		10				20	
2	բազկաթոռներ, բազմոցներ	կոմպլ				1						1	
3	խոհանոցային սեղաններ	կոմպլ				12						12	
4	սեղան՝ դիմադիր	հատ				2						2	
5	սեղան աշակերտական,	կոմպլ				45						45	
6	գրապահարաններ	հատ				18						18	
7	գրասենյակային կահույք	կոմպլ				1						1	
8	կավիճով գրելու համար	հատ				15						15	
9	սեղան, գրասեղան, աշխատանքային, գրասենյակային	հատ				16						16	
									0.0		0.0		0.0

ԳՆՈՐԴ

Կ.Տ.

ՀՀ Տավուշի մարզի Հաղարծինի միջնակարգ դպրոց
Գ. Հաղարծին, 1 փ շենք 18
ՀՎՀՀ 07900743
Հ/Հ 16015011280500
ՎՏԲ Հայաստան Դիլիջան մ/Ճ
Հաղարծինի դպրոցի տնօրեն

_____Գ. Թամամյան

ՎԱՃԱՌՈՂ

_____
Հասցե _____
ՀՎՀՀ _____
Հ/Հ _____

Տնօրեն _____
(ստորագրություն

(ստորագրություն)